ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԿԱՊԱԼԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԳՀԱՇՁԲ-24/4

ք. Երևան «19» «03» 2024թ.

ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական ծառայությունը, գործելով Հայաստանի Հանրապետության անունից, ի դեմս ծառայության գլխավոր քարտուղարի պարտականությունները կատարող՝ Կամո Ամիրխանյանի, որը գործում է ծառայության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «Օրիոն 7» ՍՊ ընկերությունը, ի դեմս տնօրեն Նարինե Սարգսյանի, որը գործում է կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կապալառու), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Կապալառուն պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում կատարել սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) N 1 Հավելվածով սահմանված ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված **ՀՀ ԱՆ Աբովյան քրեակատարողական հիմնարկում շինարարական** աշխատանքները (այսուհետ՝ աշխատանք), իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել կատարված աշխատանքը և վարձատրել դրա համար:

1.2 Պայմանագրով նախատեսված աշխատանքները Կապալառուն կատարում է քաղաքաշինական նորմատիվատեխնիկական և հաստատված նախագծանախահաշվային փաստաթղթերին, ինչպես նաև սույն պայմանագրի անբաժանելի մասը կազմող աշխատանքի ծավալաթերթ-նախահաշվին համապատասխան:

1.3 Պայմանագրով նախատեսված աշխատանքները սկսվում են պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո և կատարման ժամկետը սահմանվում է՝ 180 օր:

Պայմանագրով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների կատարման ժամկետները սահմանված են սույն պայմանագրի հավելված 2-ում ներկայացված օրացուցային գրաֆիկով :

2. ԿԱՊԱԼԱՌՈՒԻ ՄԻՋՈՑՆԵՐՈՎ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԿԱՏԱՐԵԼԸ

2.1 Աշխատանքը կատարվում է Կապալառուի աշխատանքային և տեխնիկական ռեսուրսով, շինարարական նյութերով և միջոցներով:

2.2 Կապալառուն պատասխանատվություն է կրում իր տրամադրած նյութերի և սարքավորումների որակի համար:

3. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3.1. Պատվիրատուն իրավունք ունի՝

3.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կապալառուի իրականացրած աշխատանքի ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը.

3.1.2 Կապալառուի կողմից պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետի (ներառյալ օրացուցային գրաֆիկի) խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել աշխատանքի կատարման նոր ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.1.3 Չընդունել աշխատանքի արդյունքը՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված դրույթներին, պայմանագրի 1.2 կետով նախատեսված պահանջներին չհամապատասխանելու դեպքում՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը, ինչպես նաև 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.1.4 Միակողմանի լուծել պայմանագիրը և պահանջել հատուցելու իրեն պատճառված վնասները, եթե.

ա) Կապալառուն ժամանակին չի սկսում աշխատանքի կատարումը կամ աշխատանքը կատարում է այնքան դանդաղ, որ դրա ժամանակին ավարտը դառնում է ակնհայտ անհնար,

բ) Կապալառուն խախտել է պայմանագրի 1.3 կետում նախատեսված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը),

գ) Կապալառուի կողմից կատարված աշխատանքը չի համապատասխանում նախագծանախահաշվային փաստաթղթերով սահմանված պահանջներին,

դ) Կապալառուի կողմից խախտվել են պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով աշխատանքի թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետները.

3.1.5 Աշխատանքի արդյունքի թերությունների հետ կապված պահանջներ ներկայացնել երաշխիքային ժամկետում:

3.1.6 Լիազորել այլ անձի՝ աշխատանքի իրականացման նկատմամբ տեխնիկական հսկողություն իրականացնելու նպատակով.

3.1.7 Մինչև Պատվիրատուի կողմից Կապալառուի կատարած աշխատանքի արդյունքն ընդունելը, պահանջել իրեն հանձնելու անավարտ աշխատանքի արդյունքը՝ պայմանագիրն օրենքով կամ պայմանագրով նախատեսված հիմքերով դադարեցնելու դեպքում:

3.2. Պատվիրատուն պարտավոր է՝

3.2.1 Աշխատանքը կատարելիս՝ աջակցել Կապալառուին պայմանագրով նախատեսված դեպքերում, ծավալով և կարգով.

3.2.2 Պայմանագրով նախատեսված ժամկետում և կարգով Կապալառուի մասնակցությամբ զննել և ընդունել կատարված աշխատանքը (դրա արդյունքը), իսկ պայմանագրից աշխատանքի արդյունքը վատթարացնող շեղումներ կամ աշխատանքում այլ թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ հայտնել Կապալառուին.

3.2.3 Պայմանագրի ուժի մեջ մտնելու պահից 5 աշխատանքային օրվա ընթացքում Կապալառուին տրամադրել աշխատանքի իրականացման համար համապատասխան տարածք.

3.2.4 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքն ընդունելու դեպքում Կապալառուին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները:

3.3. Կապալառուն իրավունք ունի՝

3.3.1 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքը հանձնելու դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու պայմանագրի 5.1 կետով նախատեսված՝ վճարման ենթակա գումարը:

3.3.2 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.4 կետում նշված ժամկետների խախտման դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները և պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

3.4. Կապալառուն պարտավոր է՝

3.4.1 Աշխատանքները կատարել անձամբ, պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում, իր աշխատանքային և տեխնիկական ռեսուրսով , ինչպես նաև անհրաժեշտ շինարարական նյութերով, միջոցներով ու պատշաճ որակով՝ նախագծին և ծավալաթերթին համապատասխան:

3.4.2 Կատարել աշխատանքի վերաբերյալ Պատվիրատուի տված ցուցումները, եթե դրանք չեն հակասում պայմանագրի պայմաններին:

3.4.3 Ապահովել շինմոնտաժային աշխատանքների կատարումը քաղաքաշինական նորմատիվատեխնիկական փաստաթղթերի և սույն պայմանագրի պայմաններին համապատասխան, կատարել իր կողմից մոնտաժված ինժեներական հաղորդակցուղիների համակարգերի (էլեկտրամատակարարման, ջեռուցման, ջրամատակարարման, կոյուղու, օդափոխությանև այլն) անհատական փորձարկում, մասնակցել սարքավորման համալիր փորձարկմանը:

3.4.4 Աշխատանքի արդյունքը Պատվիրատուին հանձնելիս նրան հայտնել այն պահանջների և կանոնների մասին, որոնց պահպանումն անհրաժեշտ է աշխատանքի արդյունքի արդյունավետ և անվտանգ օգտագործման (շահագործման) համար, ինչպես նաև տեղեկություններ հաղորդել այդ պահանջները և կանոնները չպահպանելու հնարավոր հետևանքների մասին:

3.4.5 Պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը) խախտելու և Պատվիրատուի կողմից աշխատանքի կատարման նոր ժամկետ սահմանվելու դեպքում, ապահովել աշխատանքի կատարումը սահմանված ժամկետում և յուրաքանչյուր ուշացված օրվա համար վճարել պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.4.6 Պայմանագրի 3.1.4 կետով նախատեսված հիմքերով պայմանագրի լուծման դեպքում հատուցել Պատվիրատուին պատճառված վնասները և վճարել 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.4.7 Շինարարության օբյեկտի կոնսերվացման անհրաժեշտության ծագման դեպքում՝ իր միջոցներով կատարել աշխատանքը դադարեցնելու և շինարարությունը կոնսերվացնելու անհրաժեշտությունից բխող ողջամիտ ծախսերը:

3.4.8 Եթե շինարարական ծրագրերի կատարման արդյունքի կամ դրա առանձին բաղադրիչի համար սահմանված երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել կատարված աշխատանքի թերություններ, ապա Կապալառուն պարտավոր է իր միջոցների հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

3.4.9 Պայմանագրով երաշխիքային ժամկետ է սահմանվում Պատվիրատուի կողմից ողջ ծավալով Աշխատանքն ընդունվելու օրվան հաջորդող օրվանից հաշված 365 օր (առնվազն 365 օրացուցային օր): Եթե երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել կատարված Աշխատանքի թերություններ, ապա Կապալառուն պարտավոր է իր միջոցների հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

3.4.10 Կապալի օբյեկտի, դրա առանձին մասերի (կոնստրուկցիաներ և այլն) և օգտագործվելիք նյութերի և (կամ) սարքերի ու սարքավորումների երաշխիքային ժամկետներին ներկայացվող նվազագույն պահանջները ներկայացված են պայմանագրի N 1– Հավելվածում:

3.4.11 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

4. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

4.1 Կատարված աշխատանքը ընդունվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Ընդ որում սույն պայմանագրի շրջանակներում կատարված և Պատվիրատուին ներկայացված աշխատանքի արդյունքի ընդունումն իրականացվում է, եթե Կապալառուն ամբողջությամբ՝ ամենօրյա ռեժիմով ապահովել է քաղաքաշինական նորմատիվատեխնիկական և հաստատված նախագծանախահաշվային փաստաթղթերով սահմանված պահանջները, այդ թվում շինարարական հրապարակի պատշաճ կազմակերպումը, կահավորումը, տեխնիկական անվտանգության, սանիտարահիգիենիկ և բնապահպանական (այդ թվում կլիմայի փոփոխության հետ հարմարվողականության միջոցառումները) նորմերը՝ որի վերաբերյալ առկա է շինարարական աշխատանքների կատարման նկատմամբ տեխնիկական հսկողություն իրականացնող՝ Պատվիրատուի հետ պայմանագիր կնքած կազմակերպության գրավոր հավաստումը:

Մինչև պայմանագրով աշխատանքի կատարման համար նախատեսված օրը ներառյալ Կապալառուն Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 4.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 4): Ընդ որում Կապալառուն հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

4.2 Եթե կատարված աշխատանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 4.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 15 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

4.3 Եթե կատարված աշխատանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կապալառուի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

4.4 Եթե պայմանագրի 4.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում կատարված աշխատանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա կատարված աշխատանքը համարվում է ընդունված և պայմանագրի 4.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4.5 Աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների արդյունքները նախագծանախահաշվային փաստաթղթերին չհամապատասխանելու դեպքում կողմերը կազմում են երկկողմ ակտ՝ թվարկելով թերությունների վերացման համար պահանջվող՝ կատարման ենթակա լրացուցիչ աշխատանքները և ժամկետները: Կապալառուն պարտավոր է պայմանագրային գնի սահմաններում, առանց լրացուցիչ վճարի, կատարել անհրաժեշտ աշխատանքներ:

4.6 Աշխատանքն ընդունելիս կիրառվում են նաև հետևյալ պայմանները՝

1) Կապալառուի կողմից շինարարության ավարտի մասին տեղեկություն ստանալուց հետո Պատվիրատուի ղեկավարը ձեռնարկում է միջոցներ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված ավարտված շինարարությունն ընդունող հանձնաժողով (այսուհետ՝ ընդունող Հանձնաժողով) ձևավորելու և կատարված աշխատանքներն ընդունելու համար.

2) պայմանագրի կատարման արդյունքը համարվում է ամբողջությամբ ընդունված պետական կառավարման մարմնի ղեկավարի՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված կարգով ձևավորված հանձնաժողովի կողմից կատարված աշխատանքներն ընդունվելու դեպքում.

3) մինչև ավարտված շինարարական օբյեկտի ընդունումը՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 9-ի N 596-Ն որոշման համապատասխան ստեղծված հանձնաժողովը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով փաստագրում է ավարտված շինարարության օբյեկտը և կազմում օբյեկտը շահագործման ընդունող հանձնաժողովի ակտ.

4) սույն կետի 3-րդ ենթակետում նշված ակտը սահմանված կարգով ստանալուց հետո պատասխանատու ստորաբաժանումն ստուգում է ավարտված շինարարական օբյեկտի (կատարված աշխատանքների) համապատասխանությունը պայմանագրի պահանջներին և, եթե կատարված աշխատանքը՝

ա. համապատասխանում է պայմանագրի պայմաններին, ապա ստորագրվում է պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրություն,

բ. չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա արձանագրություն չի ստորագրվում.

5) մինչև սույն կետով նախատեսված պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրությունն ստորագրելը՝ Պատվիրատուն չի վճարում կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսը, իսկ տարաժամկետ վճարելու դեպքում՝ վերջին վճարման գումարը, որը չի կարող պակաս լինել կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսից:

5. ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳԻՆԸ ԵՎ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Սույն պայմանագրի ընդհանուր գինը կազմում է 59.541.656 (հիսունինը միլիոն հինգ հարյուր քառասունմեկ հազար վեց հարյուր հիսունվեց) ՀՀ դրամ, որից 9.923.609 (ինը միլիոն ինը հարյուր քսաներեք հազար վեց հարյուր ինը) ՀՀ դրամը՝ ԱԱՀ-ն: Գինը ներառում է Կապալառուի կողմից իրականացվող բոլոր ծախսերը:

5.1.1 Պայմանագրի գնից՝ մինչև 17 000 000 (տասնյոթ միլիոն) ՀՀ դրամը, Պատվիրատուն փոխանցում է Կապալառուի բանկային հաշվին՝ որպես կանխավճար:

Ընդ որում կանխավճար հատկացվում է, եթե Կապալառուն ամբողջությամբ ապահովել է շինարարության կազմակերպման աշխատանքների մեկնարկման փուլում նախատեսված միջոցառումները՝ քաղաքաշինական նորմատիվատեխնիկական և հաստատված նախագծանախահաշվային փաստաթղթերով սահմանված պահանջները, այդ թվում շինարարական հրապարակի պատշաճ կազմակերպումը, կահավորումը, տեխնիկական անվտանգության, սանիտարահիգիենիկ և բնապահպանական (այդ թվում կլիմայի փոփոխության հետ հարմարվողականության միջոցառումները) նորմերը՝ որի վերաբերյալ առկա է տվյալ շինարարական աշխատանքների կատարման նկատմամբ տեխնիկական հսկողություն իրականացնող՝ Պատվիրատուի հետ պայմանագիր կնքած կազմակերպության գրավոր հավաստումը:

Կանխավճարի մարումն իրականացվում է հանձնման-ընդունման արձանագրությունների հիման վրա կատարվող վճարումներից նվազեցումներ (պահումներ) կատարելու ձևով: Ընդ որում մինչև կանխավճարի ամբողջական մարումը, Կապալառուին վճարումներ չեն կատարվում:

5.2 Աշխատանքի գինը կայուն է և Կապալառուն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

5.3 Պատվիրատուն վճարում է աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված՝ առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների՝ պայմանագրի 4-րդ բաժնով նախատեսված կարգով ընդունելու դեպքում Հայաստանի Հանրապետության դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կապալառուի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով:

Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված ամիսներին, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 25-ը:

Ընդ որում վճարում կատարելու նպատակով հանձնման-ընդունման արձանագրությունը ստորագրվելու օրվանից հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն վճարման հանձնարարագիրը և հանձնման-ընդունման արձանագրության պատճենը մուտքագրում է լիազորված մարմնի գանձապետական համակարգ, իսկ սահմանված կարգի համաձայն ներկայացված փաստաթղթերի հիման վրա լիազորված մարմինը տվյալ վճարումը կատարում է հանձնման-ընդունման արձանագրությունը գանձապետական համակարգ մուտքագրված լինելու

դեպքում՝ սույն պայմանագրի վճարման ժամանակացույցով սահմանված ժամկետներում, հինգ աշխատանքային օրվա ընթացքում:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Կապալառուն պատասխանատվություն է կրում Աշխատանքի որակի և սույն պայմանագրի 1.3 կետով (ներառյալ օրացուցային գրաֆիկը) նախատեսված ժամկետի պահպանման համար:

6.2 Սույն պայմանագրով նախատեսված Աշխատանքի կատարման ժամկետը խախտելու դեպքում Կապալառուից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ կատարման ենթակա, սակայն չկատարված Աշխատանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով Պատվիրատուի կողմից աշխատանքը չընդունվելու, ինչպես նաև 3.1.4 կետով նախատեսված կարգով պայմանագիրը լուծելու դեպքում Կապալառուից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 5.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև աշխատանքի արդյունքը սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից չընդունվելու դեպքում:

6.4 Պայմանագրի 6.2, 6.3 և 6.5.1 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Կապալառուին վճարվող գումարների հետ:

6.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.3 կետով նախատեսված ժամկետների խախտման համար Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.5.1 Սույն պայմանագրով նախատեսված աշխատանքների կատարման ողջ ընթացքում քաղաքաշինական նորմատիվատեխնիկական և հաստատված նախագծանախահաշվային փաստաթղթերով սահմանված պահանջների, այդ թվում շինարարական հրապարակի պատշաճ կազմակերպման, կահավորման, տեխնիկական անվտանգության, սանիտարահիգիենիկ և բնապահպանական (այդ թվում կլիմայի փոփոխության հետ հարմարվողականության միջոցառումների) նորմերի չպահպանման յուրաքանչյուր արձանագրված դեպքի համար Կապալառուի նկատմամբ կիրառվում է պատասխանատվության հետևյալ միջոցները.

N	Խախտումը	Պատասխանատվությունը

6.6 Պայամանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքների վճարումը կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կապալառուն ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կապալառուի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող աշխատանքի ծավալների կամ ձեռք բերվող աշխատանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.6 Եթե պայմանագիրն իրականացվում է ենթակապալի պայմանագիր կնքելու միջոցով.

1) Կապալառուն պատասխանատվություն է կրում ենթակապալառուի պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար.

2) պայմանագրի կատարման ընթացքում ենթակապալառուի փոփոխման դեպքում Կապալառուն գրավոր տեղեկացնում է Պատվիրատուին՝ տրամադրելով ենթակապալի պայմանագրի պատճենը և դրա կողմ հանդիսացող անձի տվյալները՝ փոփոխությունը կատարվելու օրվանից հինգ աշխատանքային օրվա ընթացքում:

8.7 Եթե պայմանագիրն իրականացվում է համատեղ գործունեության (կոնսորցիումի) պայմանագիր կնքելու միջոցով, ապա այդ պայմանագրի մասնակիցները կրում են համատեղ և համապարտ պատասխանատվություն: Ընդ որում, կոնսորցիումի անդամի կոնսորցիումից դուրս գալու դեպքում պայմանագիրը միակողմանիորեն լուծվում է և կոնսորցիումի անդամների նկատմամբ կիրառվում են պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցները:

8.8 Աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կապալառուի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել աշխատանքի օգտագործման պահանջը, իսկ Կապալառուի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե աշխատանքների կատարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 7 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կապալառու կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կապալառուի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կապալառուն:

8.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.11 Կապալառուի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կապալառուն, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկվում է նաև Կապալառուի էլեկտրոնային փոստին:

8.12 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.13 Սույն պայմանագիրը կազմված է 18 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3, N 4 և N 4.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.14 Սույն պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8.15 Պայմանագրով նախատեսված աշխատանքների կատարումն իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով: Պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում այդ նպատակով պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում: Ընդ որում յուրաքանչյուր հաջորդ համաձայնագիրը կնքելու համար ֆինանսական միջոցների նախատեսման համար սույն կետով տրված վեցամսյա ժամանակահատվածի հաշվարկը սկսվում նախորդ համաձայնագրով սահմանված աշխատանքի կատարման արդյունքը ողջ ծավալով պատվիրատուի կողմից ընդունվելու օրվանից: Եթե պայմանագրի կատարման համար հատկացված ֆինանսական միջոցների չափը գերազանցում է գնումների բազային միավորի քսանհինգապատիկը, ապա Պատվիրատուի կողմից համաձայնագիր կկնքվի, եթե Կապալառուի կողմից տուժանքի ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումները փոխարինվում են երաշխիքով կամ կանխիկ փողով՝ հաշվի առնելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշման N 1 հավելվածի 32-րդ կետի 1-ին ենթակետի «գ» և 17-րդ ենթակետի «բ» պարբերությունների պահանջները: Ընդ որում, Կապալառուն համաձայնագիրը կնքում, իսկ տուժանքի ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումների փոխարինման դեպքում նաև նոր ապահովումները Պատվիրատուին ներկայացնում է համաձայնագիր կնքելու ծանուցումը ստանալու օրվանից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում: Հակառակ դեպքում պայմանագիրը Պատվիրատուի կողմից միակողմանիորեն լուծվում է:

9. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՊԱԼԱՌՈՒ
ՀՀ ԱՆ Քրեակատարողական ծառայություն	**«Օրիոն 7» ՍՊԸ**
Ք. Երևան, Արշակունյաց-63	**ք.Երևան,Մամիկոնյանց 27 շ. Բն. 126**
ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն	**«Ամերիաբանկ» ՓԲԸ**
Հ/Հ	**ՀՎՀՀ 00147538**
ՀՎՀՀ 02204739	**Հ/Հ 1570084145400100**
ՔԿ ծառայության	**Տնօրեն Ն.Սարգսյան**
գլխավոր քարտուղարի Պ/Կ	
Կ. Ամիրխանյան	
----------	----------
(ստորագրություն)	/ստորագրություն/
Կ.Տ.	Կ.Տ

Հավելված N 1
«19» «03» 2024թ. կնքված
ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԳՀԱՇՁԲ-24/4 ծածկագրով պայմանագրի

ԾԱՎԱԼԱԹԵՐԹ-ՆԱԽԱՀԱՇԻՎ*

ՀՀ ԱՆ «Աբովյան» քրեակատարողական հիմնարկի մեկուսարանի և վարչական մասնաշենքերի շինարարական աշխատանքների

NN	Աշխատանքների անվանումը	չ/մ	ծավալը	Միավորի արժեքը	Ընդամենը /հազ դրամ/
1	2	3	4	5	6
	Մեկուսարանի շին.վերանորոգման աշխատանքներ				
	Քանդման աշխատանքներ				
1	Բետոնե հատակների քանդում	մ²	262,21	0,5	131,105
2	Բետոնե մոզայիկ հատակների քանդում	մ²	64,23	0,5	32,115
3	Մանրահատակից հատակի քանդում	մ2	289,06	0,7	202,342
4	Առկա փայտե հատակների ապամոնտաժում տախտակամածի հետ համատեղ /հանձնում պատվիրատուին/	մ2	25,07	1	25,07
5	Փայտյա դռների քանդում /հանձնում պատվիրատուին/	մ2	20,79	1	20,79
6	Առաստաղներից գաջի սվաղի քանդում	մ2	79	1	79
7	Պատերից գաջի սվաղի քանդում	մ2	210	0,7	147
8	Պատերի վրայից ներկի հեռացում	մ²	1987,83	0,2	397,566
9	Առաստաղների վրայից ներկի հեռացում	մ²	711,44	0,2	142,288
10	Շին աղբի դուրս բերում,բարձում ա/ինքնաթափերի վրա և տեղափոխում 7կմ	տն	63,62	3	190,86
	Վերանորոգման աշխատանքներ				
	Բացվածքներ				
1	Դուռ մետաղապլաստե բլոկով, սպիտակ, 60մմ հաստ.,	մ2	22,79	40	911,6
	Հատակներ				
1	Խճի նախաշերտի իրականացում	մ3	5,014	2	10,028
2	30մմ հաստությամբ ց/ավազե հարթեցնող շերտ	մ2	640,57	5	3202,85
3	Ինքնահարթեցվող լցնովի հատակների իրականացում, 4 մմ վինիլային պաշտպանիչ շերտով:	մ2	576,04	11	6336,44
4	Մոզայիկ բետոնե հատակների իրականացում 50մմ հաստ	մ2	64,23	9	578,07
5	Բետոնի նախապատրաստական շերտ B12.5 դասի	մ3	32	30	960
6	Խրամուղու քանդում IV կարգի գրունտում	մ3	14,4	1	14,4
7	Ավելորդ գրունտի,բարձում ա/ինքնաթափերի վրա և տեղափոխում 7կմ	տն	15,504	3	46,512
8	Հետլիցք տեղի գրունտով	մ3	6,24	3	18,72

9	Խճի նախաշերտի իրականացում զբոսաբակի պարսպի տակ 200մմ բարձրությամբ	մ3	2,4	2	4,8
10	Պարսպի հիմքերի իրականացում միաձույլ B20 դասի ե/բետոնից	մ3	5,76	35	201,6
11	Ամրան 14 A500c	տն	0,104	330	34,32
12	Ամրան 6AIc	տն	0,096	330	31,68
13	Հիմքերի հորիզոնական ջրամեկուսացում տոլով	մ2	12	1,5	18
14	Հիմքերի ուղղաձիգ ջրամեկուսացում 2 շերտ բիտումի քսուկով	մ2	24	1	24
15	200մմ լայնական հատույթի կտրվածքով կանոնավոր տիպի տուֆաքարի շարվածքով պարսպի կառուցում	մ3	7,2	70	504
16	Շարվածքի ամրանավորում 6AIc ամրանային ցանցերից	տն	0,03	330	9,9
17	Պարիսպի ցեմենտավազե սվաղ ցանցով	մ2	72	6	432
18	Պողպատե անկյունակների տեղադրում 60x60x3	տն	0,04928	700	34,496
19	Պողպատե ճաղաշարի իրականացում 14A500c ամրաներից 200x200 բջիջով	տն	0,435	900	391,5
20	Առկա 200մմ հատույթով պարսպի ապամոնտառում	մ3	0,4	1	0,4
	Հարդարման աշխատանքներ				
1	Պատերի լավորակ գաջե սվաղ	մ2	250	4	1000
2	Առաստաղի լավորակ գաջե սվաղ	մ2	96	5	480
3	Առաստաղների լավորակ ներկում լատեքսային ներկով համատարած մածկապատումով	մ2	795,44	3,5	2784,04
4	Պատերի լավորակ ներկում լատեքսային ներկով համատարծ մածիկապատմաբ	մ2	2300,83	0,03	69,0249
5	Շեպերի հարդարող մետաղական անկյունակների տեղադրում	գծմ	420	0,5	210
	Էլեկտրամատակարարում				
1	Առաստաղային լուստուների տեղադրում Լեդե տիպի լուսատուներից 15Վտ	հատ	110	5	550
2	Ավտոմատ անջատիչների տուփի տեղադրում /15տեղ/	հատ	2	40	80
3	Ավտոմատ անջատիչ միաֆազ 16Ա	հատ	32	5	160
4	Ավտոմատ անջատիչ միաֆազ 63Ա	հատ	2	5	10
5	ВВГ 3x2,5մմ2 մալուխների անցկացում	գծմ	1 100	0,4	440
6	ВВГ 3x4մմ2 մալուխների անցկացում	գծմ	650	0,5	325
7	Տուփ անջատիչների և պատի մեջ տեղադրվող վարդակների համար	հատ	154	0,2	30,8
8	Բաժանիչ տուփ փակ լարանցման, էլ.լուսավորության ցանցերի համար	հատ	50	0,2	10

9	Մալուխների անցկացման համար պատերի վրա անցքերի բացում Փ-32մմ	տեղ	30	1	30
10	Անցքերի վերականգնում	տեղ	30	1	30
11	Ակոսների պատրաստում	գծմ	1 750	0,2	350
12	Ակոսների գաջի սվաղի վերականգնում	մ2	98,1	0,3	29,43
13	Անջատիչների տեղադրում մեկտեղանի	հատ	40	3	120
14	Անջատիչների տեղադրում երկտեղանի	հատ	7	3	21
15	Վարդակների տղադրում երկտեղանի	հատ	107	4	428
	Կշիռը				**44,92%**
	Ընդամենը				**22290,7469**
	Վարչական մասնաշենքի շին.վերանորոգման աշխատանքներ				
	Քանդման աշխատանքներ				
1	Պատերից առկա պլաստմասե պանելների ապամոնտաժում	մ2	154,3	0,5	77,15
2	Բետոնե հատակների քանդում	մ2	44,7	0,5	22,35
3	Գրանիտե սալիկներից հատակների վնասված հատվածների ապամոնտաժում	մ2	12,3	2	24,6
4	Մանրահատակից հատակի քանդում	մ2	366,25	0,5	183,125
5	Կերամիկական սալիկներից հատակի քանդում	մ2	96,3	0,5	48,15
6	Ցեմենավազե հարթաշերտի քանդում: Հատակի կերամիկական սալիկների տակ	մ2	96,3	0,5	48,15
7	Փայտյա դռների քանդում /հանձնում պատվիրատոին/	մ2	45,36	1	45,36
8	Առկա ալյումինե ապակեպատ միջնորմների ապամոնտաժում /հանձնում պատվիրատուին/	մ2	76,2	1	76,2
9	Առաստաղներից գաջի սվաղի քանդում	մ2	89,2	0,5	44,6
10	Պատերից ց/ավազե սվաղի քանդում	մ2	110,21	0,5	55,105
11	Պատերից գաջի սվաղի քանդում	մ2	210	0,5	105
12	Պատերի վրայից ներկի հեռացում	մ2	1129,6	0,2	225,92
13	Առաստաղների վրայից ներկի և պլասմասյա սալվածքի հեռացում	մ2	357,15	0,2	71,43
14	Շին աղբի դուրս բերում,բարձում ա/ինքնաթափերի վրա և տեղափոխում 7կմ	տն	38,2	3	114,6
	Վերանորոգման աշխատանքներ				
	Բացվածքներ				

1	Դուռ մետաղապլաստե բլոկով, սպիտակ,ապակեպատ 60մմ հաստ., ապակեփաթեթով 4+4մմ, պրոֆիլ ,	մ2	7,6	40	304
2	Դուռ մետաղապլաստե բլոկով, սպիտակ, 60մմ հաստ.,	մ2	58,59	35	2050,65
	Միջնորմներ				
1	Միջնորմների շարվածք 20սմ հաստ. թեթև բետոնե բլոկներով	մ3	23,54	50	1177
2	Անցքերի լցնում B7,5 դասի թեթև բետոնով	մ3	6,89	10	68,9
3	Շարվածքի ամրանավորում	տն	0,253	330	83,49
4	Միաձույլ ե/բ բարավորի պատրաստում B-15 դասի բետոնից	մ3	0,436	40	17,44
5	Ամրան Φ12A500C արժեքը	տ	0,08	330	26,4
6	Ամրան Φ6A240 արժեքը	տ	0,06	330	19,8
	Հատակներ				
1	30մմ հաստությամբ ց/ավազե հարթեցնող շերտ	մ2	562,28	3,5	1967,98
2	Մամլոգրանիտե սալիկներով հատակների պատրաստում	մ2	555,28	10	5552,8
3	Մամլոգրանիտե սալիկներով,H= 50մմ շրիշակների իրականացում	գմ	122	3	366
4	30մմ հաստ.գրանիտե սալիկներով հատակների պատրաստում	մ2	12,3	25	307,5
	Հարդարման աշխատանքներ				
1	Պատերի լավորակ գաջե սվաղ	մ2	532	3	1596
2	Առաստաղի լավորակ գաջե սվաղ	մ2	89,2	3,5	312,2
3	Պատերի լավորակ սվաղում ց/ավազով	մ2	128,21	5	641,05
4	Պատերի երեսպատում հաղճասալով	մ2	128,21	9	1153,89
5	Պլաստմասե կախովի առաստաղի իրականացում հիմնակմախքի պատրաստումով.	մ2	96,11	6	576,66
6	Պատերի լավորակ ներկում լատեքսային ներկով համատարած մածիկապատմաբ	մ2	1842,4	2,5	4606
7	Առաստաղների լավորակ ներկում լատեքսային ներկով համատարած մածկապատումով	մ2	486,44	2,5	1216,1
8	Շեպերի հարդարող մետաղական անկյունակների տեղադրում	գմ	440	0,3	132
9	Դռների և պատուհանների շեպերի գաջե սվաղում	մ2	62	5	310
10	Դռների և պատուհանների շեպերի ցեմենտավազե սվաղում	մ2	36	7	252
	Էլեկտրամատակարարում				
1	Առաստաղային լուստուների տեղադրում «Լեդե տիպի լուսատուներից 15Վտ	հատ	139	4	556

2	Ավտոմատ անջատիչների տուփի տեղադրում /15տեղ/	հատ	2	40	80
3	Ավտոմատ անջատիչ միաֆազ 16Ա	հատ	24	2	48
4	Ավտոմատ անջատիչ միաֆազ 63Ա	հատ	2	5	10
5	ՎՎԳ 3x2,5մմ2 մալուխների անցկացում	գմ	1300	0,3	390
6	ՎՎԳ 3x4մմ2 մալուխների անցկացում	գմ	640	0,5	320
7	Տուփ անջատիչների և պատի մեջ տեղադրվող վարդակների համար	հատ	158	0,3	47,4
8	Բաժանիչ տուփ փակ լարանցման, էլ.լուսավորության ցանցերի համար	հատ	56	0,3	16,8
9	Մալուխների անցկացման համար պատերի վրա անցքերի բացում Փ-32մմ	տեղ	32	1	32
10	Անցքերի վերականգնում	տեղ	32	1	32
11	Ակոսների պատրաստում	գմ	1940	0,1	194
12	Ակոսների գաջի սվաղի վերականգնում	մ2	97	1	97
13	Անջատիչների տեղադրում մեկտեղանի	հատ	32	3	96
14	Անջատիչների տեղադրում երկտեղանի	հատ	6	4	24
15	Վարդակների տղադրում երկտեղանի	հատ	120	3,5	420
	Կենցաղային ջրամատակարարում և կոյուղի				
	Ապամոնտաժային աշխատանքներ				
1	Կերամիկական զուգարանակոնքերի ապամոնտաժում	հատ	5	2	10
2	Կերամիկական լվացարանների ապամոնտաժում	հատ	5	2	10
	Մոնտաժային աշխատանքներ				
1	Փ15մմ մետաղապլաստե խողովակների տեղադրում /լվացումով և հիդրավլիկ փորձարկումով/	գմ	30	1	30
2	Գնդաին փականների տեղադրում Փ15մմ /պոլիէթիլենային/	հատ	10	3	30
3	Անցքի բացում Փ25մմ	հատ	5	1	5
4	Պոլիէթիլենային ձևավոր մասեր	հատ	30	0,5	15
5	Կերամիկական լվացարանների տեղադրում սիֆոնով	հատ	5	30	150
6	Ծորակների տեղադրում	հատ	5	15	75
7	խառնիչների տեղադրում ցնցուղով	հատ	2	20	40
8	Էլ. Ջրատաքացուցիչի տեղադրում 3.5 կվտ	հատ	2	40	80

9	Լոգարանային տաշտակի տեղադրում ցնցուղով	հատ	2	35	70
10	Կոյուղու պոլիվինիքլորիդե խողովակների տեղադրում Φ100մմ /հիդրավլիկ փորձարկումով/	գմ	45	1,5	67,5
11	Ձևավոր մասեր պոլիվինիքլորիդե Φ100մմ	հատ	18	1,5	27
12	Կոյուղու պոլիվինիքլորիդե խողովակների տեղադրում Φ50մմ /հիդրավլիկ փորձարկումով/	գմ	28	2,5	70
13	Ձևավոր մասեր պոլիվինիքլորիդե Φ50մմ	հատ	10	1,5	15
14	Կերամիկական զուգարանակոնքերի տեղադրում	հատ	5	35	175
15	Ճկուն խողովակ զուգարանակոնքի լվացման տակդիրի համար DN=15,L=0.5մ	կ-տ	5	15	75
16	Հոսակների տեղադրում d=50մմ	հատ	5	10	50
	Ընդամենը				27237,3
	Կշիռը				54,89%
	Ընդամենը շին.մոնտաժային աշխատանքներ.				49528,0469
	Ընդամենը Կշիռը շին.մոնտաժային աշխատանքներ.				99,82%
	Սարքավորումներ				
1	Էլ. Ջրատաքացուցիչի 3.5 կվտ	հատ	3	30	90
	Ընդամենը սարքավորումներ				90
	Կշիռը				0,18%
	Ընդամենը շին.մոնտաժային աշխատանքներ.+ սարքավորումներ				49618,047
	Ընդամենը կշիռը				100,00%
	ԱԱՀ			20 %	9923,609
	Ընդամենը				59541,656

*Կապալառուն աշխատանքները կատարում է ՀՀ Կոտայքի մարզ, ք, Աբովյան հասցեում:

Ծանոթություն՝

Կապալի օբյեկտի, դրա առանձին մասերի (կոնստրուկցիաներ և այլն) և օգտագործվելիք նյութերը և (կամ) սարքերն ու սարքավորումները պետք է լինեն նոր, չօգտագործված և պետք է ունենան որակի սերտիֆիկատ և լինեն գործարանային փաթեթավորմամբ՝ եթե դա կիրառելի է տվյալ նյութերի և (կամ) սարքերի ու սարքավորումների համար, իսկ երաշխիքային ժամկետներին առնվազն մեկ տարի ժամկետով:

Շինարարական աշխատանքներ իրականացնող կապալառու կազմակերպությունը պետք է ունենա հետևյալ լիցենզիաները՝
ՀՀ կառավարությանն առընթեր քաղաքաշինության պետական կոմիտեի կողմից տրված լիցենզիա «Կապիտալ շինարարության իրականացում», ըստ քաղաքաշինության հետևյալ ոլորտների՝

ա/ «քաղաքացիական և արդյունաբերական»,
բ/ հիդրոտեխնիկական»:
գ/ «էներգետիկ»:

Մասնակիցը պետք է ունենա հետևյալ տեխնիկական միջոցները՝

1. Ինքնաթափ ավտոմեքենա - առնվազն 5տոննա եռնատարությանը / 1 հատ/:
2. տրակտոր-էքսկավատոր հող հրելու, տեղափոխելու և քանդելու հնարավորությամբ / 1 հատ /:
3. ավտոկռունկ մինչև 10 մ բարձրություն և 2 տ բեռնամբարձության հնարավորությամբ / 1 հատ /:

Աշխատանքները կատարելու համար անհրաժեշտ է ունենալ հետևյալ աշխատանքային ռեսուրսները՝

1. ճարտարագետ-հիդրոտեխնիկ- նվազագույնը 5 տարի շինարարական աշխատանքային փորձով,
2. ճարտարագետ-շինարար - նվազագույնը 5 տարի շինարարական աշխատանքային փորձով,
3. շինարար-տեխնիկ – նվազագույնը 5 տարի շինարարական աշխատանքային փորձով,
4. աշխ.ղեկ - նվազագույնը 5 տարի շինարարական աշխատանքային փորձով:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ ԱՆ Քրեակատարողական ծառայություն
Ք. Երևան, Արշակունյաց-63
ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ
ՀՎՀՀ 02204739

ՔԿ ծառայության
գլխավոր քարտուղարի Պ/Կ
Կ. Ամիրխանյան

/ստորագրություն/
Կ.Տ

ԿԱՊԱԼԱՌՈՒ

«Օրիոն 7» ՍՊԸ
ք.Երևան,Մամիկոնյանց 27 շ. Բն. 126
«Ամերիաբանկ» ՓԲԸ
ՀՎՀՀ 00147538
Հ/Հ 1570084145400100
Տնօրեն Ն.Սարգսյան

/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված N 2
«19» «03» 2024թ. կնքված
ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԳՀԱՇՁԲ-24/4 ծածկագրով պայմանագրի

ՕՐԱՑՈՒՑԱՅԻՆ ԳՐԱՖԻԿ

ՀՀ ԱՆ «Աբովյան» քրեակատարողական հիմնարկի մեկուսարանի և վարչական մասնաշենքերի շինարարական աշխատանքների

NN	Կապալառուի կողմից կատարվելիք աշխատանքների առանձին տեսակների	Աշխատանքների կատարման ժամկետը**	
		Սկիզբը	Ավարտը՝ օրացույցային օր
1	2	3	4
1	Նախապատրաստական աշխատանքներ	ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրը:	4 օր
2	Քանդման աշխատանքներ	ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրը:	50 օր
3	Առկա միջնորումների ապամոնտաժում	ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրը:	60 օր
4	Նոր հատակների իրականացում	ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրը:	180 օր
5	Ինժիներական կոմունիկացիաների իրականացում	ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրը:	90 օր
6	Ներքին հարդարման աշխատանքներ	ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրը:	180 օր
7	Այլ աշխատանքներ	ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրը:	30 օր
Ընդամենը			**180 օրացուցային օր**

*** Եթե պայմանագիրը կնքվում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, ապա «Սկիզբը» սյունակում ժամկետի սկիզբը նշվում է ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրը:*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
ՀՀ ԱՆ Քրեակատարողական ծառայություն
Ք. Երևան, Արշակունյաց-63
ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ
ՀՎՀՀ 02204739
ՔԿ ծառայության
գլխավոր քարտուղարի Պ/Կ
Կ. Ամիրխանյան

/ստորագրություն/
Կ.Տ

ԿԱՊԱԼԱՌՈՒ
«Օրիոն 7» ՍՊԸ
ք.Երևան,Մամիկոնյանց 27 շ. Բն. 126
«Ամերիաբանկ» ՓԲԸ
ՀՎՀՀ 00147538
Հ/Հ 1570084145400100
Տնօրեն Ն.Սարգսյան

/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված N 3
«19» «03» 2024թ. կնքված
ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԳՀԱՇՁԲ-24/4 ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Աշխատանքի							
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2024թ-ին՝ ըստ եռամսյակների, այդ թվում՝				
			1-ին եռամսյակ	2-րդ եռամսյակ	3-րդ եռամսյակ	4-րդ եռամսյակ	Ընդամենը
1	45611300/501	ՀՀ ԱՆ «Աբովյան» քրեակատարողական հիմնարկի մեկուսարանի և վարչական մասնաշենքերի վերանորոգման աշխատանքներ	-	-	-	«Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի Համաձայն	

** Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով: Եթե պայմանագիրը կնքվում է "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, ապա սույն ժամանակացույցը լրացվում և կնքվում է ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի հետ միաժամանակ՝ որպես դրա անբաժանելի մաս:*
*** հրավերում գումարները նշվում են տոկոսով, իսկ պայմանագիրը կնքելիս տոկոսի փոխարեն նշվում է կոնկրետ գումարի չափ:*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
ՀՀ ԱՆ Քրեակատարողական ծառայություն
Ք. Երևան, Արշակունյաց-63
ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ
ՀՎՀՀ 02204739
ՔԿ ծառայության
գլխավոր քարտուղարի Պ/Կ
Կ. Ամիրխանյան
_____
/ստորագրություն/
Կ.Տ

ԿԱՊԱԼԱՌՈՒ
«Օրիոն 7» ՍՊԸ
ք.Երևան,Մամիկոնյանց 27 շ. Բն. 126
«Ամերիաբանկ» ՓԲԸ
ՀՎՀՀ 00147538
Հ/Հ 1570084145400100
Տնօրեն Ն.Սարգսյան
_____
/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված 4
«19» «03» 2024թ. կնքված
ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԳՀԱՇՁԲ-24/4 ծածկագրով պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝
_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը կատարել է հետևյալ աշխատանքները՝

N	Կատարված աշխատանքների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Աշխատանքը հանձնեց	Աշխատանքը ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 4.1
«19» «03» 2024թ. կնքված
ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԳՀԱՇՁԲ-24/4 ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և _____-ի
Պատվիրատուի անունը Կատարողի անունը
(այսուհետ՝ Կատարող) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը
գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված աշխատանքները.

Աշխատանքի		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն